ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3

հեռ. (+ 374 10) 56 43 20
ֆաքս (+ 374 10) 52 68 44
էլ. փոստ info@moh.am

18.12.2013 N ՍԱՀ/22/13961-13
Ձեր N _____

«ՀԵՏԱՔՆՆՈՂ ԼՐԱԳՐՈՂՆԵՐ» Հ/Կ-Ի ՆԱԽԱԳԱՀ,
«ՀԵՏՔ» ԹԵՐԹԻ ԽՄԲԱԳԻՐ
ՊԱՐՈՆ ԷԴԻԿ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Բաղդասարյան

Ի պատասխան Ձեր 2013թ. դեկտեմբերի 10-ի թիվ h-67-h-3 հարցման հայտնում եմ, որ նիկոտինային մաստակները ինչպես ողջ աշխարհում, այնպես էլ Հայաստանի Հանրապետությունում կիրառվում են ծխախոտային կախվածությունից ազատվելու նպատակով: Հայաստանի Հանրապետությունում որպես դեղ, գրանցված են՝ «Նիկորետե 2մգ և 4մգ» մաստակները և նրանց շրջանառությունը կարգավորվում է դեղերի և լիցենզավորման ոլորտը կարգավորող օրենսդրությամբ: Նիկոտինային մաստակների մանրածախ իրացմամբ կարող են զբաղվել դեղատնային գործունեության լիցենզիա ունեցող իրավաբանական անձիք և անհատ ձեռնարկատերերը (մաստակները դեղատներից բաց է թողնվում առանց դեղատոմսի):

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ մինչ այժմ բացակայում են գիտականորեն ապացուցված փաստարկներ, որոնք կհաստատեն ինչպես էլեկտրոնային սիգարետների անվտանգ լինելը, այնպես էլ նրանց արդյունավետությունը որպես ծխախոտային կախվածությունից ազատվելու միջոց:

Էլեկտրոնային սիգարետների շրջանառությանը առողջապահության բնագավառի օրենսդրությամբ չի կարգավորվում:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ՍՈՒՐԵՆ ՔՐՄՈՅԱՆ

Կատարող՝ Վարդուհի Գրիգորյան
ՀՀ ԱՆ աշխատակազմի դեղորայքային
քաղաքականության վարչություն
հեռախոս 52 27 21